ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ

ՀՐԱՄԱՆ

Թիվ 37-Լ

ՊԵՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՃԱՆԱՊԱՐՀԱՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՏԱՀԱՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՔԱՐՏՈՒՄ ՆԵՐԱՌՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ (ՔԱՆԱԿԱԿԱՆ) ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հուլիսի 2-ի N 1095-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել՝

1) պետական վիճակագրական հաշվառման ենթակա ճանապարհատրանսպորտային պատահարի հաշվառման էլեկտրոնային քարտում ներառվող տեղեկությունների կազմը՝ համաձայն հավելված 1-ի.

2) ճանապարհատրանսպորտային պատահարների վիճակագրական (քանակական) տվյալների վերաբերյալ վարչական վիճակագրական հաշվետվության ձևը՝ համաձայն հավելված 2-ի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

ԳՆԴԱՊԵՏ **Վ.ՂԱԶԱՐՅԱՆ**

«30» սեպտեմբերի 2020 թ.
ք.Երևան

Հավելված 1
ՀՀ ոստիկանության պետի 2020 թվականի
սեպտեմբերի 30-ի N 37 -Լ հրամանի

ԿԱԶՄ

ՊԵՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՃԱՆԱՊԱՐՀԱՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՏԱՀԱՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՔԱՐՏՈՒՄ ՆԵՐԱՌՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Պետական վիճակագրական հաշվառման ենթակա ճանապարհատրանսպորտային պատահարի (այսուհետ՝ ՃՏՊ) հաշվառման էլեկտրոնային քարտը (այսուհետ՝ քարտ) բաղկացած է համարակալված 65 բաժիններից (քարտի տպագիր տարբերակի ձևը՝ ձև 1):

2. Այն դեպքում, երբ քարտի նույն բաժնում ՃՏՊ-ին առնչվում են մեկից ավելի կետեր, ապա լրացվում են բոլորը:

3. Քարտի «_____» մասում լրացվում է այն մարզը/քաղաքը, տարածաշրջանը, որտեղ տեղի է ունեցել ՃՏՊ-ն, իսկ «№ _____» մասում՝ քարտի համարը՝ տվյալ տարածաշրջանում տվյալ տարվա ընթացքում տեղի ունեցած ՃՏՊ-ի հերթական համարին համապատասխան:

Մարզը/քաղաքը, տարածաշրջանը

համարը

4. Քարտի «**Զոհ-Վիրավոր**» մասում քարտի 46-րդ, 55-րդ և 62-րդ կետերի հիման վրա ինքնաշխատ եղանակով լրացվում է ՃՏՊ-ի հետևանքով զոհված և (կամ) վիրավորված անձանց թիվը:

5. Քարտում ներառվող տեղեկությունները լրացվում են հետևյալ պահանջների հիման վրա.

1) Բաժին 1՝ «**Քարտի կարգավիճակը**» - «Քարտը լրացվել է» մասում լրացվում է քարտի լրացման օրը, ամիսը, տարեթիվը, «Քարտը փոփոխվել է» մասում՝ քարտի փոփոխության օրը, ամիսը, տարեթիվը, եթե այն փոփոխվել է, իսկ «Քարտը հանվել է» մասում՝ քարտը հանելու օրը, ամիսը, տարեթիվը, եթե պատահարը հանվել է հաշվառումից.

2) Բաժին 2՝ «**Օրը**» - լրացվում է միայն թվերով (օրինակ՝ 31).

3) Բաժին 3՝ «**Ամիսը**» - լրացվում է միայն թվերով (օրինակ՝ 12).

4) Բաժին 4՝ «**Տարեթիվը**» - լրացվում է միայն թվերով (օրինակ՝ 2018).

5) Բաժին 5՝ «**Ժամը**» - լրացվում է միայն թվերով (օրինակ՝ 16^{30}).

6) Բաժին 6՝ «**Շաբաթվա օրը**» - 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերում նշված տեղեկությունների հիման վրա ինքնաշխատ եղանակով լրացվում է շաբաթվա օրը (օրինակ՝ շաբաթ).

7) Բաժին 7՝ «**Պատահարի ծանրության աստիճանը**» - համապատասխան թվային ցուցիչով լրացվում է ՃՏՊ-ի ծանրության աստիճանը (ՃՏՊ-ի ծանրության աստիճանը լրացվում է առավել ծանր հետևանք նախատեսող թվային ցուցիչով, օրինակ՝ 2 զոհ, 5 վիրավորի դեպքում լրացվում է 1 ցուցիչը).

8) Բաժին 8՝ **«ՃՏՊ-ին մասնակից տրանսպորտային միջոցների քանակը»** - լրացվում է միայն թվերով՝ ինքնաշխատ եղանակով.

9) բաժին 9՝ **«Տուժած վարորդների թիվը»** - լրացվում է միայն թվերով՝ ինքնաշխատ եղանակով.

10) բաժին 10՝ **«Տուժած ուղևորների թիվը»** - լրացվում է միայն թվերով՝ ինքնաշխատ եղանակով.

11) բաժին 11՝ **«Տուժած հետիոտների թիվը»** - լրացվում է միայն թվերով՝ ինքնաշխատ եղանակով.

12) Բաժին 12՝ **«ՃՏՊ պահին տեսանելիությունը և եղանակային պայմանները»** - լրացվում է ՃՏՊ-ի պահին տեսանելիությանը և եղանակային պայմաններին համապատասխան թվային ցուցիչը (օրինակ՝ Անձրև - 6).

13) Բաժին 13՝ **«Լուսային պայմաններ»** - լրացվում է ՃՏՊ-ի պահի լուսային պայմաններին համապատասխանող թվային ցուցիչը (օրինակ՝ Բնական լուսավորվածությամբ - 1).

14) Բաժին 14՝ **«Փախուստ ՃՏՊ-ի վայրից»** - լրացվում է ՃՏՊ-ի վայրում վարորդի գործողությանը համապատասխանող թվային ցուցիչը (օրինակ՝ Այո, բայց հայտնաբերվել է - 2):

15) Բաժին 15՝ **«Երթևեկություն»** - լրացվում է ՃՏՊ-ի վայրի երթևեկության պայմաններին համապատասխանող թվային ցուցիչը (օրինակ՝ Միակողմանի - 1).

16) Բաժին 16՝ **«Բաժանարար գոտի»** - լրացվում է ՃՏՊ-ի վայրի երթևեկության պայմաններին համապատասխանող թվային ցուցիչը (օրինակ՝ Չկա - 2).

17) Բաժին 17՝ **«Խաչմերուկի ձևը»** - լրացվում է ՃՏՊ-ի վայրի խաչմերուկի ձևին համապատասխանող թվային ցուցիչը (օրինակ՝ Խաչմերուկից դուրս - 6).

18) Բաժին 18՝ **«Երթևեկության կարգավորում»** - լրացվում է ՃՏՊ-ի վայրի երթևեկության կարգավորմանը համապատասխանող թվային ցուցիչը (օրինակ՝ Կարգավորողի կողմից - 6).

19) Բաժին 19՝ **«Պատահարի տեսակները»** - լրացվում է տվյալ ՃՏՊ-ի տեսակին համապատասխանող թվային ցուցիչը (օրինակ՝ Բախում - 1): ՃՏՊ-ների տեսակներն են՝

ա. բախում՝ ՃՏՊ, որի դեպքում շարժվող տրանսպորտային միջոցն ընդհարվում է մեկ այլ շարժվող տրանսպորտային միջոցի կամ շարժվող երկաթուղու շարժակազմին (Այս տեսակին են դասվում տրանսպորտային միջոցների հանդիպակաց, համընթաց, կողային բախումները, լուսացույցից առաջ, երթևեկության ծանրաբեռնվածության կամ տրանսպորտային միջոցի անսարքության պատճառով հանկարծակի կանգառ կատարած տրանսպորտային միջոցին բախվելը և երկաթուղու շարժակազմի բախումը երկաթուղային գծանցի վրա կանգառ կատարած (թողնված) տրանսպորտային միջոցին:),

բ. շրջում՝ ՃՏՊ, որի դեպքում տրանսպորտային միջոցը շրջվում է,

գ. խոչընդոտի վրաերթ՝ ՃՏՊ, որի դեպքում տրանսպորտային միջոցն անցնում է անշարժ առարկայի վրայով կամ ընդհարվում է դրան (ծառ, կամրջի հենասյուն, սյուն, պարիսպ և այլն),

դ. կանգնած տրանսպորտային միջոցի վրաերթ՝ ՃՏՊ, որի դեպքում շարժվող տրանսպորտային միջոցը ընդհարվում է անշարժ տրանսպորտային միջոցին,

ե. հետիոտնի վրաերթ՝ ՃՏՊ, որի դեպքում տրանսպորտային միջոցը հարվածում (դիպչում) է հետիոտնին կամ հետիոտն ինքն է հարվածում (դիպչում) շարժվող տրանսպորտային միջոցին (Այս տեսակին են դասվում նաև այն ՃՏՊ-ները, երբ հետիոտնին հարվածում (դիպչում) է տրանսպորտային միջոցի հետ կապված որևէ առարկա (կոնտեյներ, ճոպան, տախտակ և այլն) կամ տրանսպորտային միջոցով փոխադրվող բեռը:),

զ. հեծանվորդի վրաերթ՝ ՃՏՊ, որի դեպքում տրանսպորտային միջոցը հարվածում (դիպչում) է հեծանվորդին (կամ՝ նրա հեծանիվին) կամ հեծանվորդն ինքն է հարվածում (դիպչում) շարժվող տրանսպորտային միջոցին (այդ թվում՝ հեծանիվով),

է. լծկան տրանսպորտային միջոցի վրաերթ՝ ՃՏՊ, որի դեպքում տրանսպորտային միջոցը հարվածում (դիպչում) է լծված կենդանուն կամ այդ կենդանու միջոցով տեղափոխվող սայլակին կամ լծված կենդանիները կամ այդ կենդանիները տեղափոխող սայլակը հարվածում (դիպչում) է շարժվող տրանսպորտային միջոցին,

ը. կենդանու վրաերթ՝ ՃՏՊ, որի դեպքում տրանսպորտային միջոցը հարվածում (դիպչում) է վայրի կամ ընտանի կենդանուն կամ դրանք են հարվածում (դիպչում) շարժվող տրանսպորտային միջոցին,

թ. ուղևորի վայր ընկնել՝ ՃՏՊ, որի դեպքում տրանսպորտային միջոցի շահագործմամբ պայմանավորված՝ ուղևորը վայր է ընկնում շարժման մեջ գտնվող տրանսպորտային միջոցի սրահում (խցիկում) կամ տրանսպորտային միջոցից,

ժ. այլ՝ սույն կետի «ա»-«թ» ենթակետերում նշված տեսակներին չհամապատասխանող ՃՏՊ (օրինակ՝ տրամվայի գծերից վագոնի դուրս գալը, փոխադրվող բեռի վայր ընկնելը, տրանսպորտային միջոցի անվադողի տակից իր շպրտվելը՝ մարդու, կենդանու կամ այլ տրանսպորտային միջոցի վրա, երթևեկության մասնակից չհանդիսացող անձանց վրաերթը, հանկարծակի հայտնված խոչընդոտի (ընկած բեռ, պոկված անիվ և այլն) վրաերթը և այլն).

20) Բաժին 20՝ **«Բախման տեսակը»** - լրացվում է բախման տվյալ տեսակին համապատասխանող թվային ցուցիչը (օրինակ՝ Առջևից - 1), իսկ եթե ՃՏՊ-ի տեսակը բախում չէ, ապա լրացվում է 5 ցուցիչը.

21) Բաժին 21՝ **«Ճանապարհի հատակագծի և պրոֆիլի տարրերը»** - լրացվում է ճանապարհի տվյալ հատվածի հատակագծին և պրոֆիլի տարրերին համապատասխանող թվային ցուցիչը (օրինակ՝ Հատակագծում կոր - 2).

22) Բաժին 22՝ **«Ճանապարհի կահավորանքը և ինժեներական կառույցները»** - լրացվում է ճանապարհի տվյալ հատվածի կահավորանքին և ինժեներական կառույցներին համապատասխանող թվային ցուցիչը (օրինակ՝ Խաչմերուկ - 4).

23) Բաժին 23՝ **«Ծածկի տեսակը»** - լրացվում է ՃՏՊ-ի վայրի ճանապարհի ծածկին համապատասխանող թվային ցուցիչը (օրինակ՝ Հողային - 6).

24) Բաժին 24՝ **«Երթևեկելի մասի վիճակը»** - լրացվում է ՃՏՊ-ի վայրի երթևեկելի մասի վիճակին համապատասխանող թվային ցուցիչը (օրինակ՝ Թաց - 2).

25) Բաժին 25՝ **«ՃՏՊ վայրը»** - լրացվում է ՃՏՊ-ի կատարման վայրին համապատասխանող թվային ցուցիչը (օրինակ՝ Քաղաք - 1).

26) Բաժին 26՝ **«Ճանապարհի տեսակը»** - լրացվում է ՃՏՊ-ի վայրի ճանապարհի տեսակին համապատասխանող թվային ցուցիչը (օրինակ՝ Միջպետական - 1).

27) Բաժին 27՝ **«ՃՏՊ-ների առաջացմանը նպաստող պայմաններ»** - լրացվում է ՃՏՊ-ի առաջացմանը նպաստող պայմաններին համապատասխանող թվային ցուցիչները (օրինակ՝ Անհարթ կամ խանդակավոր ծածկ - 3, Լուսացույցի թերություններ - 12).

28) Բաժին 28՝ **«ՃՏՊ-ի վայրի անվանումը»** - եթե ՃՏՊ-ն տեղի է ունեցել բնակավայրում, ապա «Քաղաքի (գյուղի, մարզի) անվանումը» տողում լրացվում է քաղաքի կամ գյուղի անվանումը, եթե բնակավայրից դուրս՝ մարզի անվանումը: «Ուղղությունը» տողում լրացվում է ՃՏՊ-ի մասնակից տրանսպորտային միջոցի շարժման ուղղությունը (եթե ՃՏՊ-ին մասնակից են մեկից ավելի տրանսպորտային միջոցներ, ապա լրացվում է նախնական տվյալներով մեղավոր վարորդի վարած տրանսպորտային միջոցի շարժման ուղղությունը): «Ճանապարհի (փողոցի) անվանումը» տողում լրացվում է ճանապարհի (փողոցի) անվանումը: Եթե ՃՏՊ-ն տեղի է ունեցել բնակավայրից և ճանապարհից դուրս (հանքերում կամ շահագործման չհանձնված, կառուցվող ճանապարհին), ապա այս տեղեկությունները նույնպես լրացվում են «Ճանապարհի (փողոցի) անվանումը» տողում: «Դեպքի վայրը» մասում լրացվում է ՃՏՊ-ի վայրի հասցեն (շենքի կամ որևէ այլ անշարժ օբյեկտի համարը կամ հեռավորությունը ճանապարհի սկզբից): «Միայն խաչմերուկում երկրորդ ճանապարհի (փողոցի) անվանումը» տողում խաչմերուկում տեղի ունեցած ՃՏՊ-ի դեպքում լրացվում է հատող ճանապարհի (փողոցի) անվանումը.

29) Բաժին 29՝ **«ՃՏՊ-ի վայրը քարտեզի վրա»** - աշխարհագրական քարտեզի վրա նշվում է ՃՏՊ-ի ստույգ վայրը.

30) Բաժին 30՝ **«ՃՏՊ-ի վայրի կոորդինատները»** - 29-րդ կետում նշված տեղեկության հիման վրա ինքնաշխատ եղանակով լրացվում է ՃՏՊ-ի վայրի կոորդինատները.

31) Բաժին 31՝ **«Ճանապարհի №»** - լրացվում է ՃՏՊ-ի վայրի ճանապարհի համարը՝ ըստ ճանապարհների ցանկի (օրինակ՝ Մ2).

32) Բաժին 32՝ **«ՃՏՊ-ի վայրի հեռավորությունը ճանապարհի սկզբից»** - լրացվում է ՃՏՊ-ի վայրի հեռավորությունը ճանապարհի սկզբից՝ **«կմ»** մասում - ամբողջական կիլոմետրը, իսկ **«100մ» մասում՝** ամբողջական 100 մետրը (օրինակ՝ եթե ՃՏՊ-ն տեղի է ունեցել ճանապարհի 123 կմ 800 մ հատվածում, ապա լրացվում է **«կմ»** - 123, **«100մ»** - 8).

33) Բաժին 33՝ **«Հաշվառման համարանիշը»** - «Տրանսպորտային միջոց 1» մասում լրացվում է ՃՏՊ-ի մասնակից 1-ին տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշը, «Տրանսպորտային միջոց 2» մասում՝ 2-րդ տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշը, «Տրանսպորտային միջոց 3» մասում՝ 3-րդ տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշը.

34) Բաժին 34՝ **«Տրանսպորտային միջոցի մակնիշը»** - «Տրանսպորտային միջոց 1» մասում լրացվում է ՃՏՊ-ի մասնակից 1-ին տրանսպորտային միջոցի մակնիշը, «Տրանսպորտային միջոց 2» մասում՝ 2-րդ տրանսպորտային միջոցի մակնիշը, «Տրանսպորտային միջոց 3» մասում՝ 3-րդ տրանսպորտային միջոցի մակնիշը.

35) Բաժին 35՝ **«Հաշվառման վկայագրի սերիան և համարը»** - «Տրանսպորտային միջոց 1» մասում՝ լրացվում է ՃՏՊ-ի մասնակից 1-ին տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագրի սերիան և համարը, «Տրանսպորտային միջոց 2» մասում՝ 2-րդ տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագրի սերիան և համարը, «Տրանսպորտային միջոց 3» մասում՝ 3-րդ տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագրի սերիան և համարը.

36) Բաժին 36՝ **«Վարորդի անունը, ազգանունը»** - «Տրանսպորտային միջոց 1» մասում լրացվում է ՃՏՊ-ի մասնակից 1-ին տրանսպորտային միջոցի վարորդի անունը, ազգանունը, «Տրանսպորտային միջոց 2» մասում՝ ՃՏՊ-ի մասնակից 2-րդ տրանսպորտային միջոցի վարորդի անունը, ազգանունը, «Տրանսպորտային միջոց 3» մասում՝ ՃՏՊ-ի մասնակից 3-րդ տրանսպորտային միջոցի վարորդի անունը, ազգանունը.

37) Բաժին 37՝ **«Վարորդական վկայականի սերիան և համարը»** - «Տրանսպորտային միջոց 1» մասում լրացվում է ՃՏՊ-ի մասնակից 1-ին տրանսպորտային միջոցի վարորդի վարորդական վկայականի սերիան և համարը, «Տրանսպորտային միջոց 2» մասում՝ 2-րդ տրանսպորտային միջոցի վարորդի վարորդական վկայականի սերիան և համարը, «Տրանսպորտային միջոց 3» մասում՝ 3-րդ տրանսպորտային միջոցի վարորդի վարորդական վկայականի սերիան և համարը.

38) Բաժին 38՝ **«Տրանսպորտային միջոցի տեսակը»** - «ՏՄ 1» վանդակում լրացվում է ՃՏՊ-ի մասնակից 1-ին տրանսպորտային միջոցի տեսակին համապատասխանող թվային ցուցիչը, «ՏՄ 2» վանդակում՝ ՃՏՊ-ի մասնակից 2-րդ տրանսպորտային միջոցի տեսակին համապատասխանող թվային ցուցիչը, «ՏՄ 3» վանդակում՝ ՃՏՊ-ի մասնակից 3-րդ տրանսպորտային միջոցի տեսակին համապատասխանող թվային ցուցիչը (օրինակ՝ Մոպեդ-11).

39) Բաժին 39՝ **«Ղեկային տեղաբաշխումը»** - «ՏՄ 1» վանդակում լրացվում է ՃՏՊ-ի մասնակից 1-ին տրանսպորտային միջոցի ղեկային տեղաբաշխմանը համապատասխանող թվային ցուցիչը, «ՏՄ 2» վանդակում՝ ՃՏՊ-ի մասնակից 2-րդ տրանսպորտային միջոցի ղեկային տեղաբաշխմանը համապատասխանող թվային ցուցիչը, «ՏՄ 3» վանդակում՝ ՃՏՊ-ի մասնակից 3-րդ տրանսպորտային միջոցի ղեկային տեղաբաշխմանը համապատասխանող թվային ցուցիչը (օրինակ՝ Աջակողմյան-2).

40) Բաժին 40՝ **«Վարորդի որակավորումը»** - առաջին վանդակում լրացվում է ՃՏՊ-ի մասնակից 1-ին տրանսպորտային միջոցի վարորդի որակավորմանը համապատասխանող թվային ցուցիչը, երկրորդ վանդակում՝ ՃՏՊ-ի մասնակից 2-րդ տրանսպորտային միջոցի վարորդի որակավորմանը համապատասխանող թվային ցուցիչը, երրորդ վանդակում՝ ՃՏՊ-ի մասնակից 3-րդ տրանսպորտային միջոցի վարորդի որակավորմանը համապատասխանող թվային ցուցիչը (օրինակ՝ Չի համապատասխանում-2).

41) Բաժին 41՝ **«Վարորդի սեռը»** - առաջին վանդակում լրացվում է ՃՏՊ-ի մասնակից 1-ին տրանսպորտային միջոցի վարորդի սեռին համապատասխանող թվային ցուցիչը, երկրորդ վանդակում՝ ՃՏՊ-ի մասնակից 2-րդ տրանսպորտային միջոցի վարորդի սեռին համապատասխանող թվային ցուցիչը, երրորդ վանդակում՝ ՃՏՊ-ի մասնակից 3-րդ

տրանսպորտային միջոցի վարորդի սեռին համապատասխանող թվային ցուցիչը (օրինակ՝ Արական-1).

42) Բաժին 42՝ **«Վարորդի տարիքը»** - առաջին վանդակում թվերով լրացվում է ՃՏՊ-ի մասնակից 1-ին տրանսպորտային միջոցի վարորդի տարիքը, երկրորդ վանդակում՝ ՃՏՊ-ի մասնակից 2-րդ տրանսպորտային միջոցի վարորդի տարիքը, երրորդ վանդակում՝ ՃՏՊ-ի մասնակից 3-րդ տրանսպորտային միջոցի վարորդի տարիքը, իսկ եթե անհայտ է, ապա լրացվում է 00 (եթե հայտնի է, ապա մուտքագրվում է ծննդյան օրը, ամիսը, տարին, իսկ տարիքը լրացվում է ինքնաշխատ եղանակով).

43) Բաժին 43՝ **«Վարորդական ստաժը»** - առաջին վանդակում թվերով լրացվում է ՃՏՊ-ի մասնակից 1-ին տրանսպորտային միջոցի վարորդի վարորդական ստաժը, երկրորդ վանդակում՝ ՃՏՊ-ի մասնակից 2-րդ տրանսպորտային միջոցի վարորդի վարորդական ստաժը, երրորդ վանդակում՝ ՃՏՊ-ի մասնակից 3-րդ տրանսպորտային միջոցի վարորդի վարորդական ստաժը, իսկ եթե անհայտ է, ապա լրացվում է 00.

44) Բաժին 44՝ **«Վարորդի ղեկին գտնվելու ժամանակը (ժամ)»** - առաջին վանդակում թվերով լրացվում է ՃՏՊ-ի մասնակից 1-ին տրանսպորտային միջոցի վարորդի ղեկին գտնվելու ժամանակը, երկրորդ վանդակում՝ ՃՏՊ-ի մասնակից 2-րդ տրանսպորտային միջոցի վարորդի ղեկին գտնվելու ժամանակը, երրորդ վանդակում՝ ՃՏՊ-ի մասնակից 3-րդ տրանսպորտային միջոցի վարորդի ղեկին գտնվելու ժամանակը, իսկ եթե անհայտ է, ապա լրացվում է 00.

45) Բաժին 45՝ **«Անվտանգության գոտի/սաղավարտ»** - առաջին վանդակում լրացվում է ՃՏՊ-ի մասնակից 1-ին տրանսպորտային միջոցում անվտանգության գոտու կամ սաղավարտի առկայությանը և (կամ) օգտագործմանը համապատասխանող թվային ցուցիչը, երկրորդ վանդակում՝ ՃՏՊ-ի մասնակից 2-րդ տրանսպորտային միջոցում անվտանգության գոտու կամ սաղավարտի առկայությանը և (կամ) օգտագործմանը համապատասխանող թվային ցուցիչը, երրորդ վանդակում՝ ՃՏՊ-ի մասնակից 3-րդ տրանսպորտային միջոցում անվտանգության գոտու կամ սաղավարտի առկայությանը և (կամ) օգտագործմանը համապատասխանող թվային ցուցիչը (օրինակ՝ Առկա է, չի օգտագործվել-2).

46) Բաժին 46՝ **«Վարորդի վնասվածքի աստիճանը»** - առաջին վանդակում լրացվում է ՃՏՊ-ի մասնակից 1-ին տրանսպորտային միջոցի վարորդի ստացած վնասվածքի աստիճանին համապատասխանող թվային ցուցիչը, երկրորդ վանդակում՝ ՃՏՊ-ի մասնակից 2-րդ տրանսպորտային միջոցի վարորդի ստացած վնասվածքի աստիճանին համապատասխանող թվային ցուցիչը, երրորդ վանդակում՝ ՃՏՊ-ի մասնակից 3-րդ տրանսպորտային միջոցի վարորդի ստացած վնասվածքի աստիճանին համապատասխանող թվային ցուցիչը (օրինակ՝ Մահացու-1, Լուրջ-2, Չկա-4).

47) Բաժին 47՝ **«ՏՄ մանևրում և վիճակ»** - առաջին վանդակում լրացվում է ՃՏՊ-ի մասնակից 1-ին տրանսպորտային միջոցի կատարած մանևրին համապատասխանող թվային ցուցիչը, երկրորդ վանդակում՝ ՃՏՊ-ի մասնակից 2-րդ տրանսպորտային միջոցի կատարած մանևրին համապատասխանող թվային ցուցիչը, երրորդ վանդակում՝ ՃՏՊ-ի մասնակից 3-րդ

տրանսպորտային միջոցի կատարած մանևրին համապատասխանող թվային ցուցիչը (օրինակ՝ Հետադարձ-11, Վազանց-13, Կողանցում-14).

48) Բաժին 48՝ **«ՏՄ անսարքությունը»** - առաջին վանդակում լրացվում է ՃՏՊ-ի մասնակից 1-ին տրանսպորտային միջոցի անսարքությանը համապատասխանող թվային ցուցիչը, երկրորդ վանդակում՝ ՃՏՊ-ի մասնակից 2-րդ տրանսպորտային միջոցի անսարքությանը համապատասխանող թվային ցուցիչը, երրորդ վանդակում՝ ՃՏՊ-ի մասնակից 3-րդ տրանսպորտային միջոցի անսարքությանը համապատասխանող թվային ցուցիչը (օրինակ՝ Անիվների ու դողերի-4, Կցորդման-6, Չկա-8).

49) Բաժին 49՝ **«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի օրենսդրության խախտումը վարորդի կողմից»** - առաջին վանդակում լրացվում է ՃՏՊ-ի մասնակից 1-ին տրանսպորտային միջոցի վարորդի կատարած իրավախախտմանը համապատասխան թվային ցուցիչը, երկրորդ վանդակում՝ ՃՏՊ-ի մասնակից 2-րդ տրանսպորտային միջոցի վարորդի կատարած իրավախախտմանը համապատասխան թվային ցուցիչը, երրորդ վանդակում՝ ՃՏՊ-ի մասնակից 3-րդ տրանսպորտային միջոցի վարորդի կատարած իրավախախտմանը համապատասխան թվային ցուցիչը (օրինակ՝ Արագության-2, Քարշակման-14, Վազանցի -15).

50) Բաժին 50՝ **«Նյութական վնասը»** - առաջին սյունակի վանդակներում լրացվում է ՃՏՊ-ի մասնակից 1-ին տրանսպորտային միջոցի կրած կամ դրա կողմից հասցված վնասին համապատասխանող թվային ցուցիչը, երկրորդ սյունակի վանդակներում՝ ՃՏՊ-ի մասնակից 2-րդ տրանսպորտային միջոցի կրած կամ դրա կողմից հասցված վնասին համապատասխանող թվային ցուցիչը, երրորդ սյունակի վանդակներում՝ ՃՏՊ-ի մասնակից 3-րդ տրանսպորտային միջոցի կրած կամ դրա կողմից հասցված վնասին համապատասխանող թվային ցուցիչը (Եթե վնաս է պատճառվել և տրանսպորտային միջոցին, և ճանապարհային շինություններին, ապա սյունակի առաջին և երկրորդ տողերի վանդակներում լրացվում է տրանսպորտային միջոցների կրած վնասին համապատասխանող թվային ցուցիչը, իսկ սյունակի երրորդ տողի վանդակում՝ ճանապարհի կրած վնասին համապատասխանող թվային ցուցիչը (օրինակ՝ Դիմացից-5.1, Տանիքից-5.5, Ճանապարհային կառույցների-4).

51) Բաժին 51՝ **«Տուժած ուղևորների անունը, ազգանունը»** - «Տուժած ուղևորները» սյունակում առանձին տողերով լրացվում է ՃՏՊ-ի հետևանքով տուժած յուրաքանչյուր ուղևորի անունը, ազգանունը.

52) Բաժին 52՝ **«ՏՄ համարը»** - համապատասխան տողերում լրացվում է ՃՏՊ-ի մասնակից տրանսպորտային միջոցի համարը, որում գտնվել է տվյալ ուղևորը (օրինակ՝ Տ/Մ1).

53) Բաժին 53՝ **«Սեռը»** - բաժին 41-ի պայմաններով համապատասխան տողերում լրացվում է տուժած ուղևորների սեռը.

54) Բաժին 54՝ **«Տարիքը»** - բաժին 42-ի պայմաններով համապատասխան տողերում լրացվում է տուժած ուղևորների տարիքը.

55) Բաժին 55՝ **«Վնասվածքի աստիճանը»** - բաժին 46-ի պայմաններով համապատասխան տողերում լրացվում է տուժած ուղևորների վնասվածքի աստիճանը.

56) Բաժին 56՝ **«Գործողություն»** - համապատասխան տողերում լրացվում է տուժած ուղևորների գործողությանը համապատասխանող թվային ցուցիչը (օրինակ՝ ՏՄ նստելիս-3).

57) Բաժին 57՝ **«Անվտանգության գոտի/սաղավարտ»** - բաժին 45-ի պայմաններով համապատասխան տողերում լրացվում է տրանսպորտային միջոցում անվտանգության գոտու կամ սաղավարտի առկայությունը և (կամ) օգտագործումը.

58) Բաժին 58՝ **«Խախտում»** - համապատասխան տողերում լրացվում է տուժած ուղևորների կատարած իրավախախտումներին համապատասխանող թվային ցուցիչները (օրինակ՝ Վարորդի ուշադրությունը շեղելը -2).

59) Բաժին 59՝ **«Տուժած հետիոտների անունը, ազգանունը»** - «Տուժած հետիոտները» սյունակում առանձին տողերով լրացվում է ՃՏՊ-ի հետևանքով տուժած յուրաքանչյուր հետիոտնի անունը, ազգանունը.

60) Բաժին 60՝ **«Սեռը»** - բաժին 41-ի պայմաններով համապատասխան տողերում լրացվում է տուժած հետիոտների սեռը.

61) Բաժին 61՝ **«Տարիքը»** - բաժին 42-ի պայմաններով համապատասխան տողերում լրացվում է տուժած հետիոտների տարիքը.

62) Բաժին 62՝ **«Վնասվածքի աստիճանը»** - բաժին 46-ի պայմաններով համապատասխան տողերում լրացվում է տուժած հետիոտների վնասվածքի աստիճանը.

63) Բաժին 63՝ **«Գործողություն»** - համապատասխան տողերում լրացվում է տուժած հետիոտների գործողություններին համապատասխանող թվային ցուցիչները (օրինակ՝ Ոչ մի-1).

64) Բաժին 64՝ **«Դիրքը ՃՏՊ-ի ժամանակ»** - համապատասխան տողերում լրացվում է տուժած հետիոտների դիրքին համապատասխանող թվային ցուցիչները (օրինակ՝ Մայթին-5).

65) Բաժին 65՝ **«Խախտում»** - համապատասխան տողերում լրացվում է տուժած հետիոտների կատարած իրավախախտումներին համապատասխանող թվային ցուցիչները (օրինակ՝ Երթևեկելի մասում խաղալը-5):

6. Լրացուցիչ տեղեկությունների (այնպիսի տվյալներ, որոնք ընդգրկված չեն քարտում, սակայն դրանք կարող են նշանակություն ունենալ ՃՏՊ-ի նկարագրման և վերլուծության համար) առկայության դեպքում դրանք լրացվում են համապատասխան մասում՝ ազատ շարադրանքի ձևով:

7. Դեպքի նկարագրությունը լրացվում է Ճանապարհային ոստիկանության վարչական մասի համաապատասխան ծառայության կողմից՝ համաձայն հաղորդագրության:

8. Քարտը լրացնող ծառայողի տվյալները (Ճանապարհային ոստիկանության ճանապարհապարեկային ծառայության շարային ստորաբաժանման անվանումը, պաշտոնը, կոչումը, անունը, ազգանունը) լրացվում է ինքնաշխատ եղանակով:

9. ՃՏՊ-ի վայրի սխեմայի լուսանկարը կցվում է քարտին:

Ձև
Ճանապարհատրանսպորտային պատահարի հաշվառման էլեկտրոնային քարտի տպագիր տարբերակի

_____ № _____
Մարզը/քաղաքը, տարածաշրջանը — համարը

Զոհ-Վիրավոր

1. Քարտի կարգավիճակը	2. Օրը	3. Ամիսը	4.Տարեթիվը	5. Ժամը	6. Շաբաթվա օրը	7. Պատահարի ծանրության աստիճանը
Քարտը լրացվել է՝ ՕՕ.ԱԱ.ՏՏՏՏ Քարտը փոփոխվել է՝ ՕՕ.ԱԱ.ՏՏՏՏ Քարտը հանվել է՝ ՕՕ.ԱԱ.ՏՏՏՏ	____	____	_____	_____	_____	1. Մահացու ելքով 2. Մարմնական վնասվածքով

8. ՃՏՊ-ին մասնակից տրանսպորտային միջոցների քանակը

9. Տուժած վարորդների թիվը

10. Տուժած ուղևորների թիվը

11. Տուժած հետիոտների թիվը

12. ՃՏՊ-ի պահին տեսանելիությունը և եղանակային պայմանները
1. Պարզ ցերեկային
2. Պարզ գիշերային
3. Ցերեկային մառախլապատ
4. Գիշերային մառախլապատ
5. Արևային
6. Անձրև
7. Ձյուն
8. Կարկուտ
9. Քամի
10. Այլ

13. Լուսային պայմաններ
1. Բնական լուսավորվածությամբ
2. Գիշերը՝ փողոցային լուսավորվածությամբ
3. Գիշերը՝ առանց փողոցային լուսավորվածության
4. Լուսավորությունը միացված չէ

14. Փախուստ ՃՏՊ-ի վայրից
1. Չի փախել
2. Այո, բայց հայտնաբերվել է
3. Այո, բայց չի հայտնաբերվել

15. Երթևեկություն
1. Միակողմանի
2. Երկկողմանի

16. Բաժանարար գոտի
1. Կա
2. Չկա

17. Խաչմերուկի ձևը
1. 2.  3. 4. 5.
6. Խաչմերուկից դուրս
7. Այլ

18. Երթևեկության կարգավորում
1. Բացակայում է
2. Լուսացույցով
3. Լուսացույցը չի աշխատում
4. Հորիզոնական գծանշում
5. Հետիոտնային անցում
6. Կարգավորողի կողմից
7. «Զիջեք ճանապարհը» նշանով
8. «Երթևեկությունն առանց կանգառի արգելվում է» նշանով

19. Պատահարի տեսակները
1. Բախում
2. Շրջում
3. Խոչընդոտի վրաերթ
4. Կանգնած տրանսպորտային միջոցի վրաերթ
5. Հետիոտնի վրաերթ
6. Հեծանվորդի վրաերթ
7. Լծկան տրանսպորտային միջոցի վրաերթ
8. Կենդանու վրաերթ
9. Ուղևորի վայր ընկնել
10. Այլ

20. Բախման տեսակը
1. Առջևից
2. Հետևից
3. 90° անկյան տակ
4. Կողային
5. Չկա

21. Ճանապարհի հատակագծի և պրոֆիլի տարրերը
1. Հատակագծում ուղիղ
2. Հատակագծում կոր
3. Հորիզոնական
4. Թեքություն
5. Վայրէջքի ավարտ (վերելքի սկիզբ)
6. Վերելքի ավարտ (վայրէջքի սկիզբ)

22. Ճանապարհի կահավորանքը և ինժեներական կառույցները
1. Կամուրջ, էստակադ
2. Թունել
3. Հետիոտնային անցում
4. Խաչմերուկ
5. Անասունների անցուղի
6. Ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների կանգառի կետ
7. Կարգավորվող երկաթուղային գծանց
8. Չկարգավորվող երկաթուղային գծանց
9. Չկա

23. Ծածկի տեսակը
1. Ասֆալտբետոնյա
2. Ցեմենտբետոնյա
3. Սալաքարային
4. Խճային
5. Կոպճային
6. Հողային
7. Այլ

24. Երթևեկելի մասի վիճակը
1. Չոր
2. Թաց
3. Ձյունապատ
4. Մերկասառույց
5. Ծածկված կոշտացած ձյունով
6. Սառցակալած
7. Այլ

25. ՃՏՊ-ի վայրը
1. Քաղաք
2. Գյուղ
3. Բնակավայրից դուրս

26. Ճանապարհի տեսակը
1. Միջպետական
2. Հանրապետական
3. Տեղական
4. Փողոց
5. Այլ

27. ՃՏՊ-ների առաջացմանը նպաստող պայմանները
1. Սառցակալած ծածկ
2. Ծածկի բարձր սահելիություն
3. Անհարթ կամ խանդակավոր ծածկ
4. Կողնակի անբավարար վիճակ
5. Նեղ երթևեկելի մաս
6. Փոքր շառավղով կորեր
7. Անբավարար տեսանելիություն
8. Անբավարար լուսավորություն
9. Մայթերի բացակայություն
10. Պաշտպանիչ հարմարանքների բացակայություն
11. Հետիոտնային անցման բացակայություն
12. Լուսացույցի թերություններ
13. Ճանապարհային նշանների թերություններ
14. Ճանապարհային գծանշման թերություններ
15. Աշխատանքներ երթևեկելի մասում
16. Ծառեր, սյուներ և այլ խոչընդոտներ
17. Երկաթուղային գծանցի անբավարար վիճակ
18. Այլ պայմաններ
19. Չկա

28. ՃՏՊ-ի վայրի անվանումը
Քաղաքի (գյուղի, մարզի) անվանումը _____-ից ուղղությունը _____
Ճանապարհի (փողոցի) անվանումը _____ Դեպքի վայրը _____
Միայն խաչմերուկներում երկրորդ ճանապարհի (փողոցի) անվանումը _____

29. ՃՏՊ-ի վայրը քարտեզի վրա

30. ՃՏՊ-ի վայրի կոորդինատները
X -
Y -

31. Ճանապարհի №

32. ՃՏՊ-ի վայրի հեռավորությունը ճանապարհի սկզբից
կմ
100մ

	Տրանսպորտային միջոց 1(ՏՄ1)	Տրանսպորտային միջոց 2(ՏՄ2)	Տրանսպորտային միջոց 3(ՏՄ3)
33. Հաշվառման համարանիշը			
34. Տրանսպորտային միջոցի մակնիշը			
35. Հաշվառման վկայագրի սերիան և համարը			
36. Վարորդի անունը, ազգանունը			
37. Վարորդական վկայականի սերիան և համարը			

					ՏՄ1	ՏՄ2	ՏՄ3
38. Տրանսպորտային միջոցի տեսակը	1. Թեթև մարդատար 2. Միկրոավտոբուս 3. Ավտոբուս 4. Տրոլեյբուս 5. Մոտոցիկլ	6. Տրիցիկլ 7. Քվադրիցիկլ 8. Բեռնատար 9. Կցորդ/կիսակցորդ 10. Լծկան փոխադրամիջոց	11. Մոպեդ 12. Հեծանիվ 13. Հատուկ/մասնագիտացված 14. Տրակտոր 15. Այլ	16. Անհայտ է			
39. Ղեկային տեղաբաշխումը	1. Ձախակողմյան	2. Աջակողմյան					
40. Վարորդի որակավորումը	1. Համապատասխանում է	2. Չի համապատասխանում	3. Անհայտ է				
41. Վարորդի սեռը	1. Արական	2. Իգական	3. Անհայտ է				
42. Վարորդի տարիքը	00 = անհայտ						
43. Վարորդական ստաժը	00 = անհայտ						
44. Վարորդի ղեկին գտնվելու ժամանակը (ժամ)	00 = անհայտ						
45. Անվտանգության գոտի/սաղավարտ	1. Առկա է, օգտագործվել է	2. Առկա է, չի օգտագործվել	3. Առկա չէ	4. Անհայտ է			
46. Վարորդի վնասվածքի աստիճանը	1. Մահացու	2. Լուրջ	3. Աննշան	4. Չկա 5. Անհայտ է			
47. ՏՄ մանևրում և վիճակ	1. Երթևեկության սկիզբ 2. Ուղիղ երթևեկություն 3. Աջ վերադասավորում 4. Ձախ վերադասավորում 5. Ճանապարհ մուտք գործել 6. Ճանապարհից դուրս գալ	7. Անշարժ վիճակ 8. Կայանված 9. Աջ շրջադարձ 10. Ձախ շրջադարձ 11. Հետադարձ 12. Հետընթաց	13. Վազանց 14. Կողանցում 15. Արգելակում 16. Կայանում 17. Այլ 18. Անհայտ է				
48. ՏՄ անսարքությունը	1. Արգելակային համակարգերի 2. Ղեկային կառավարման համակարգերի 3. Արտաքին լուսային սարքերի	4. Անիվների ու դողերի 5. Շարժիչի 6. Կցորդման	7. Այլ 8. Չկա 9. Անհայտ է				
49. Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի օրենսդրության խախտումը վարորդի կողմից	1. Ոչ սթափ վիճակ 2. Արագության 3. Նշանների և գծանշումների պահանջների 4. Մարդկանց փոխադրման 5. Երթևեկությունն սկսելու և մանևրելու 6. Հետիոտնային անցումների հատման 7. Ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների կանգառի կետերի անցման	8. Արտաքին լուսային սարքերի կիրառման 9. Առաջինն անցնելու իրավունքի 10. Կանգառի և կայանման 11. Երկաթուղային գծանցներով երթևեկության 12. Հանդիպակաց երթևեկելի գոտի դուրս գալը	13. Բեռների փոխադրման 14. Քարշակման 15. Վազանցի 16. Խաչմերուկների անցման 17. Միջտարածության պահպանման 18. ՏՄ անսարքությունը 19. Ղեկին քնելը 20. Այլ 21. Չկա 22. Անհայտ է				
50. Նյութական վնասը	1. Չկա 2. Բեռների 3. Շինությունների 4. Ճանապարհային կառույցների	5. ՏՄ-ի՝ 5.1. Դիմացից 5.2. Ետևից 5.3. Աջից	5.4. Ձախից 5.5. Տանիքից 5.6. Բազմակողմանի	6. Այլ 7. Անհայտ է			

51. Տուժած ուղևորների անունը, ազգանունը	52. ՏՄ համարը	53. Սեռը	54. Տարիքը	55. Վնասվածքի աստիճանը	56. Գործողություն	57. Անվտանգության գոտի/սաղավարտ	58. Խախտում
1.							
2.							
3.							

59. Տուժած հետիոտների անունը, ազգանունը	60. Սեռը	61. Տարիքը	62. Վնասվածքի աստիճանը	63. Գործողություն	64. Դիրքը ՃՏՊ-ի ժամանակ	65. Խախտում
1.						
2.						
3.						

52. ՏՄ համարը Լրացվում է ՏՄ1, ՏՄ2 կամ ՏՄ3	58. Խախտում 1. Տրանսպորտային միջոցը նստելու և իջնելու 2. Վարորդի ուշադրությունը շեղելը 3. Կողավոր թափքով բեռնատար ավտոմոբիլի թափքում կանգնելը 4. Կողավոր թափքով բեռնատար ավտոմոբիլի թափքի կողերին նստելը 5. Կողավոր թափքով բեռնատար ավտոմոբիլի թափքի կողերից բարձր գտնվող բեռի վրա նստելը 6. Տրանսպորտային միջոցի դռները բացելը 7. Տրանսպորտային միջոցից դուրս կախվելը 8. Այլ 9. Չկա	63. Գործողություն 1. Ոչ մի 2. Երթևեկելի մասը հատելը 3. Երթևեկելի մասով քայլելը 4. Երթևեկելի մասի կողքով քայլելը 5. Երթևեկելի մասում խաղալը 6. Այլ	64. Դիրքը ՃՏՊ-ի ժամանակ 1. Հետիոտնային անցման վրա 2. Անվտանգության կղզյակում 3. Հետիոտնային անցումից մինչև 50մ հեռու 4. Հետիոտնային անցումից 50 մ-ից ավելի հեռու 5. Մայթին 6. Կողնակի վրա 7. Ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների կանգառի կետում 8. Այլ	65. Խախտում 1. Երթևեկելի մասի հատման 2. Լուսացույցի ազդանշանների 3. Կարգավորողի ազդանշանների 4. Հանկարծակի հայտնվելը երթևեկելի մասում 5. Երթևեկելի մասում խաղալը 6. Այլ 7. Չկա
56. Գործողություն 1. Ոչ մի 2. ՏՄ-ից իջնելիս 3. ՏՄ նստելիս 4. ՏՄ-ից ընկնելը 5. Այլ				

53-ը և 60-ը լրացվում է ինչպես 41-ը	54-ը և 61-ը լրացվում է ինչպես 42-ը	55-ը և 62-ը լրացվում է ինչպես 46-ը	57-ը լրացվում է ինչպես 45-ը

Քարտը լրացրեց՝ _____

ստորաբաժանման անվանումը, պաշտոնը, կոչումը, անունը, ազգանունը

Դեպքի նկարագրությունը (լրացվում է ՃՈ վարչական մասի կողմից՝ համաձայն հաղորդագրության)

Կցել ՃՏՊ-ի վայրի սխեմայի լուսանկարը

Լրացուցիչ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են)

Հավելված 2
ՀՀ ոստիկանության պետի 2020 թվականի
սեպտեմբերի 30-ի N _____-Լ հրամանի

Ձ Ե Վ

ՃԱՆԱՊԱՐՀԱՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ (ՔԱՆԱԿԱԿԱՆ) ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՄԱՐՄՆԱԿԱՆ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐՈՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ (ՔԱՆԱԿԱԿԱՆ) ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

20 թ.

(տարեկան)

Հ/հ	Ցուցանիշի անվանումը	Պատահար		Պատահարի հետևանք	
		ընդամենը	այդ թվում՝ մահացու ելքով	Զոհվել է	Վիրավորվել է
1	2	3	4	5	6
	I. Պատահարի վայր				
1.	Երևան				
2.	Այլ քաղաքներ				
3.	Միջպետական նշանակության ճանապարհներ				
4.	Հանրապետական նշանակության ճանապարհներ				
5.	Տեղական նշանակության ճանապարհներ				
6.	Այլ վայրեր				
	Ընդամենը				
	II. Պատահարի տեսակները				
1.	Բախում				
2.	Շրջում				
3.	Խոչընդոտի վրաերթ				
4.	Կանգնած տրանսպորտային միջոցի վրաերթ				
5.	Հետիոտնի վրաերթ				
6.	Հեծանվորդի վրաերթ				
7.	Լծկան տրանսպորտային միջոցի վրաերթ				
8.	Կենդանու վրաերթ				
9.	Ուղևորի վայր ընկնել				
10.	Այլ				
	Ընդամենը				

1	2	3	4	5	6
	III. ՏՄ-ների վարորդների պատճառով առաջացած պատահարներ				
1	Ավտոմոբիլներ – ընդամենը, այդ թվում՝				
	1) թեթև մարդատար - իրավաբանական անձանց				
	2) թեթև մարդատար - ֆիզիկական անձանց				
	3) ավտոբուս - իրավաբանական անձանց				
	4) ավտոբուս - ֆիզիկական անձանց				
	5) բեռնատար - իրավաբանական անձանց				
	6) բեռնատար - ֆիզիկական անձանց				
	7) հատուկ/մասնագիտացված - իրավաբանական անձանց				
	8) հատուկ/մասնագիտացված - ֆիզիկական անձանց				
2.	Մոտոցիկլ, մոպեդ, մոտոռոլլեր, մոտոսայլակ, շարժիչով հեծանիվ, հեծանիվ, այդ թվում՝				
	ֆիզիկական անձանց				
3.	Տրիցիկլ, քվադրիցիկլ				
4.	Տրոլեյբուս				
5.	Տրակտոր, այդ թվում՝				
	ֆիզիկական անձանց				
6.	Ինքնաշարժ մեխանիզմ				
7.	Այլ				
Անհայտ տրանսպորտային միջոց					
	Ընդամենը				
	IV. Պատահարի պատճառը				
1	Վարորդների կողմից ՃԵԿ-ի խախտում, այդ թվում՝				
	1) ոչ սթափ վիճակ				
	2) արագության				
	3) նշանների և գծանշումների պահանջների				
	4) մարդկանց փոխադրման				
	5) երթևեկությունն սկսելու և մանևրելու				
	6) հետիոտնային անցումների հատման				
	7) ընդհանուր օգտագործման ՏՄ կանգառի կետերի անցման				
	8) արտաքին լուսային սարքերի կիրառման				
	9) առաջինն անցնելու իրավունքի				
	10) կանգառի և կայանման				
	11) երկաթուղային գծանցներով երթևեկության				
	12) հանդիպակաց երթևեկելի գոտի դուրս գալը				
	13) բեռների փոխադրման				
	14) քարշակման				
	15) վազանցի				
	16) խաչմերուկների անցման				
	17) միջտարածության պահպանման				
	18) ՏՄ անսարքությունը, այդ թվում՝				
	ա. արգելակային համակարգերի				
	բ. ղեկային կառավարման համակարգերի				
	գ. արտաքին լուսային սարքերի				
	դ. անիվների ու դողերի				
	ե. շարժիչի				
	զ. կցորդման				
	է. այլ				
	19) ղեկին քնելը				
	20) այլ խախտումներ				
2	Հեծանվորդների կողմից ՃԵԿ-ի խախտում, այդ թվում՝				
	ոչ սթափ հեծանվորդների կողմից				
3	Հետիոտների կողմից ՃԵԿ-ի խախտում				
4	Ուղևորների կողմից ՃԵԿ-ի խախտում				
	Ընդամենը				

1	2	3	4	5	6
	V. Պատահարի առաջացմանը նպաստող պայման				
1.	Ճանապարհների և փողոցների անբավարար վիճակ, որից՝				
	1) սառցակալած ծածկ				
	2) ծածկի բարձր սահելիություն				
	3) անհարթ կամ խանդակավոր ծածկ				
	4) կողնակի անբավարար վիճակ				
	5) նեղ երթևեկելի մաս				
	6) փոքր շառավղով կորեր				
	7) անբավարար տեսանելիություն				
	8) անբավարար լուսավորություն				
	9) մայթերի բացակայություն				
	10) պաշտպանիչ հարմարանքների բացակայություն				
	11) հետիոտնային անցման բացակայություն				
	12) լուսացույցի թերություններ				
	13) ճանապարհային նշանների թերություններ				
	14) ճանապարհային գծանշման թերություններ				
	15) աշխատանքներ երթևեկելի մասում				
	16) Այլ				
2.	Ծառեր, սյուներ և այլ խոչընդոտներ				
3.	Երկաթուղային գծանցի անբավարար վիճակ				
4.	Այլ պայմաններ				
	Ընդամենը				

VI. Ըստ օրվա ժամերի

Օրվա ժամը	Տրանսպորտային միջոցը հայտնի է				Տրանսպորտային միջոցն անհայտ է			
	ՃՏՊ	Այդ թվում՝ մահացու ելքով	ՃՏՊ-ի հետևանք		ՃՏՊ	Այդ թվում՝ մահացու ելքով	ՃՏՊ-ի հետևանք	
			Զոհ	Վիրավոր			Զոհ	Վիրավոր
0-6								
6-9								
9-12								
12-15								
15-18								
18-21								
21-24								
Ընդամենը								

VII. Ըստ շաբաթվա օրերի

Շաբաթվա օրերը	Տրանսպորտային միջոցը հայտնի է				Տրանսպորտային միջոցն անհայտ է			
	ՃՏՊ	Այդ թվում՝ մահացու ելքով	ՃՏՊ-ի հետևանք		ՃՏՊ	Այդ թվում՝ մահացու ելքով	ՃՏՊ-ի հետևանք	
			Զոհ	Վիրավոր			Զոհ	Վիրավոր
Երկուշաբթի								
Երեքշաբթի								
Չորեքշաբթի								
Հինգշաբթի								
Ուրբաթ								
Շաբաթ								
Կիրակի								
Ընդամենը								

VIII. Մինչև 16 տարեկան հասակի երեխաների մասնակցությամբ պատահարներ

	ՃՏՊ	Այդ թվում՝ մահացու ելքով	ՃՏՊ-ի հետևանք	
			Զոհ	Վիրավոր
մինչև 7 տարեկան				
7-16 տարեկան ներառյալ				

IX. Տուժածների թվաքանակը					
Հ/հ	Տուժածների կարգը	Զոհվել է		Վիրավորվել է	
		Ընդամենը	որից՝ իգական սեռի	Ընդամենը	որից՝ իգական սեռի
1.	Վարորդներ-ընդամենը				
	մինչև 6 տարեկան				
	7-9 տարեկան				
	10-14 տարեկան				
	15-17 տարեկան				
	18-20 տարեկան				
	21-24 տարեկան				
	25-64 տարեկան				
	65 տարեկան և ավելի				
	անհայտ				
2.	Ուղևորներ-ընդամենը				
	մինչև 6 տարեկան				
	7-9 տարեկան				
	10-14 տարեկան				
	15-17 տարեկան				
	18-20 տարեկան				
	21-24 տարեկան				
	25-64 տարեկան				
	65 տարեկան և ավելի				
	անհայտ				
3.	Հետիոտներ-ընդամենը				
	մինչև 6 տարեկան				
	7-9 տարեկան				
	10-14 տարեկան				
	15-17 տարեկան				
	18-20 տարեկան				
	21-24 տարեկան				
	25-64 տարեկան				
	65 տարեկան և ավելի				
	անհայտ				
4.	Հեծանվորդներ-ընդամենը				
	մինչև 6 տարեկան				
	7-9 տարեկան				
	10-14 տարեկան				
	15-17 տարեկան				
	18-20 տարեկան				
	21-24 տարեկան				
	25-64 տարեկան				
	65 տարեկան և ավելի				
	անհայտ				
5.	Այլ մասնակիցներ-ընդամենը				
	մինչև 6 տարեկան				
	7-9 տարեկան				
	10-14 տարեկան				
	15-17 տարեկան				
	18-20 տարեկան				
	21-24 տարեկան				
	25-64 տարեկան				
	65 տարեկան և ավելի				
	անհայտ				
	Ընդամենը				

«_____» _____ 20___ թ.